

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՉԱՐՈՐԱԿ ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Նպատակներ և գործողություններ	Կատարման ժամանակա ցույցը	Ակնկալվող արդյունքն ըստ յուրաքանչյուր նպատակի և գործողության	Կատարված աշխատանքը
1. Ուռուցքաբանական ծառայության արդիականացում			
<p>4) Վերազինել հանրապետության ուռուցքաբանական ծառայություն իրականացնող բուժհաստատությունների նյութատեխնիկական բազան՝ հագեցնելով դրանք նորագույն ախտորոշիչ և բուժական նշանակության սարքավորումներով:</p>	<p>2014–2018 թթ.</p>	<p>4) Ուռուցքաբանական ծառայություն իրականացնող բուժհաստատություններն ապահովված են անհրաժեշտ սարքավորումներով:</p>	<p>4) 2016 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ «Վ.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ը ձեռք է բերել և անհատույց ստացել է վիդեոգաստրոսկոպիկ և վիդեոկոլոնոսկոպիկ համալիր «Pentax», թվային մամոգրաֆիկ համակարգ տոմոսինթեզով և համակարգի անխափան սնուցման սարք, շարժական ռենտգեն C-աղեղ համակարգ, ռենտգեն թվային սարքի անխափան սնուցման սարք «JOVITEO», բարձր հաճախականության էլեկտրովիրաբուժական սարք «AUTOGON II» իր լրակազմով, իոնացնող ճառագայթների չափման դոզիմետրիկ համակարգ, վիդեովիրաբուժական համալրված կայան գործիքների հավաքածուով, հիստերոռեզեկտոսկոպ</p>

			վիրահատական
5. Ուռուցքաբանական ծառայության որակի բարելավում և մշտադիտարկում			
2) Ծառայության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով որակի չափորոշիչների մշակում և համակարգում ներդրում:	2013-2017թթ	2) Ծառայության գործունեության արդյունավետության բարձրացել է	2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի հուլիսի 28-ի N 2351-Ա հրամանով հաստատվել է «Շագանակագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման սքրինինգային ծրագիրը, շագանակագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման սքրինինգի ուղեգրի, շագանակագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման սքրինինգի ուղեգրված անձանց գրանցամատյանի և շագանակագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման սքրինինգային ծրագրի իրականացման ամսեկան/ամփոփ հաշվետվության ձևերը», որի շրջանակներում 40-70 տարեկան արական սեռի անձինք անցնում են շագանակագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման սքրինինգ, ինչպես նաև նույն

<p>3) Հանրապետության մարզերի բնակչությանը որակյալ անհետաձգելի բուժօգնության ապահովում արտագնա ուռուցքաբանական խմբերի միջոցով</p>		<p>3) Հանրապետության մարզերի բնակչությանը որակյալ անհետաձգելի բուժօգնության ապահովում արտագնա ուռուցքաբանական խմբերի միջոցով</p>	<p>հրամանով սահմանվել և ներդրվել են շազանակագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման սքրինինգային ծրագրի ընթացքում կիրառվող բժշկական փաստաթղթերի ձևերը:</p> <p>3) Հանրապետության մարզերի բնակչությանը որակյալ անհետաձգելի բուժօգնության ապահովման նպատակով, Երևան քաղաքի՝ արագ արձագանքման ծառայության համար կցված հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների կողմից Հանրապետության մարզերում իրականացվում է արտագնա անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում, բոլոր այն դեպքերում, երբ պահանջվում է բարդ մասնագիտական խորհրդատվություն, բժշկական միջամտություններ տեղում և (կամ) ըստ հրավիրված մասնագետի որոշման՝ պացիենտի տեղափոխում Երևան:</p>
<p>5) Ուռուցքաբանության ոլորտում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով</p>		<p>5) Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի և միջուկային բժշկության</p>	<p>5) «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ շենքը կառուցված է, հիմնական սարքավորումները մատակարարված են, «Ճառագայթային բուժման կենտրոն» ՓԲԸ շենքի</p>

<p>ձևավորել <<Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի>> և միջուկային բժշկության ոլորտում առաջատար միջազգային առաջատար կառույցների հետ գործընկերություն</p>		<p>ոլորտի զարգացման նպատակով միջազգային առաջատար կառույցների հետ գործընկերությունը ձևավորված է</p>	<p>կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները ավարտվել են:</p>
---	--	--	--

<p>6.Ուռուցքաբանության ոլորտում համաճարակաբանական հսկողության իրականացում</p>			
<p>1) Համաճարակաբանական հսկողության համակարգի մշակում և ներդնում:</p>	<p>2012-2018 թթ.</p>	<p>1) Համաճարակաբանական հսկողության համակարգը մշակվել և ներդրվել է:</p>	<p>1) Գործադրվել է կրծքագեղձի քաղցկեղի պասիվ դետրային համաճարակաբանական հսկողության համակարգը (<< առողջապահության նախարարի 2014 թվականի դեկտեմբերի է 15-ի թիվ 2965-Ա հրաման), որի շրջանակներում հավաքագրվում է տեղեկատվություն կրծքագեղձի քաղցկեղի ռիսկի գործոնների, խմբերի և գոտիների, շրջակա միջավայրի գործոնների մասին՝ <<-ում այդ հիվանդություններին առնչվող փաստացի տվյալների ապահովման, դրանց հիման վրա հանրային առողջապահական գերակայությունների որոշման, կանխարգելիչ ծրագրերի մշակման՝ կանխարգելիչ, հակահամաճարակային միջոցառումների՝ ներառյալ բնակչության բժշկահիգիենիկ կրթության և առողջ</p>

			<p>ապրելակերպի քարոզչության նպատակով: Համաճարակաբանական հսկողության համակարգի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի ապրիլի 7-ի թիվ 784-Ա հրամանով հաստատված պարեկ կազմակերպության (ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, իսկ վերլուծությունների հրականացման համար ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի թիվ 4 մասնաճյուղ) կողմից նշանակվել են պատասխանատուներ, որոնց կողմից կատարվում է հիվանդների ընտրություն՝ ըստ դեպքի ստանդարտ բնորոշման, լրացվում են կրծքագեղձի քաղցկեղով հիվանդի հաշվառման թերթիկներ, որոնք մշակվել են ԱՀԿ մեթոդաբանությամբ: Ազգային կենտրոնի պարեկ մասնաճյուղերի մասնագետների կողմից լրացվել և կենտրոնական ապարատ են ներկայացվել մոնիտորինգի ցուցանիշների և ռիսկի գործոնների վերաբերյալ ամփոփ հաշվետվական ձևերը: Հաշվառման թերթում լրացված տվյալները ներմուծվել են համակարգչային SPSS ծրագիր, որի միջոցով 2016</p>
--	--	--	--

<p>2) Իրականացնել բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում և առողջ ապրելակերպի քարոզչություն բնակչության շրջանում՝ ռիսկի գործոնների ամրապնդման և այդ գործոնների դիմակայման հնարավորությունների ուժեղացման, ինչպես նաև բարձրացնել բնակչության տեղեկացվածությունը քաղցկեղի անհատական կանխարգելման գիտելիքների և չարորակ նորագոյացությունների ախտորոշման ու բուժման արդի հաջողությունների վերաբերյալ:</p>		<p>2) Բնակչության շրջանում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում և առողջ ապրելակերպի քարոզչություն</p>	<p>թվականին իրականացվել է հավաքագրված տվյալների վերլուծություն:</p> <p>2) - «Save the children» միջազգային կազմակերպության հետ համատեղ ՀՀ Գեղարքունիքի մարզի Այգուտ, Դրախտիկ, Դպրաբակ, Ներքին Գետաշեն, Վարդենիկ և ՀՀ Լոռու մարզի Շամլուղ, Զրաշեն և Լեռնավան գյուղական համայնքների դպրոցական կազմակերպությունների թվով 108 ուսուցիչների շրջանում իրականացվել է սեմինար-դասընթաց՝ «Դպրոցական առողջություն, սնունդ և հիգիենա» թեմայով: Դասընթացի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են դպրոցականների շրջանում առողջ ապրելակերպի ձևավորման, անառողջ սնուցման վնասակար ազդեցության հետևանքների կանխարգելման միջազգային մոտեցումները, ինչպես նաև ՀՀ-ում գործող իրավական ակտերով սահմանված պահանջները:</p> <p>- Ապահովվել է մասնակցություն «OXFAM» հայաստանյան գրասենյակի կողմից զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար կազմակերպված «Սնուցման հիմնախնդիրները</p>
---	--	--	--

			<p>Հայաստանում» թեմայով սեմինարին, որին մասնակցել են ընդհանուր թվով 25 լրագրող:</p> <ul style="list-style-type: none">- Ապահովվել է մասնակցություն Վրաստանում կայացած «Պարենային անվտազնություն և սնուցման քաղաքականության մշակում-միասնական մոտեցումներ հանուն ապագայի» թեմայով միջազգային կոնֆերանսին, որին ներկայացվել է ՀՀ-ում առողջ ապրելակերպի խթանման ուղղությամբ իրականացված աշխատանքները, ինչպես նաև քննարկվել են հարցեր՝ առողջ դպրոցական սննդի վերաբերյալ:- Մշակվել և հաստատվել է 6 տեղեկատվական պաստառ՝ «Ֆիզիկական ակտիվություն», «Առողջ սնուցում», «Ավելորդ քաշ և ճարպակալում», «Ալկոհոլի չարաշահում», «Մի վտանգեք Ձեր առողջությունը», «Ծխելը չարիք է» թեմաներով, որոնք 2017 թվականին նախատեսվում է տպագրել և բաշխել ՀՀ-ում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին:- Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ բնակչության իրազեկման նպատակով
--	--	--	--

			<p>մասնակցություն է ապահովվել թվով 18 «Ճարպակալում և ավելորդ քաշ», «Ծխախոտի օգտագործում և առողջություն», «Ֆիզիկական ակտիվություն», «Անառողջ սնուցում» թեմաներով:</p> <p>- 2016 թվականի ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով իրականացվել է չարորակ նորագոյացություններին առնչվող 20 միջոցառման լուսաբանում:</p>
--	--	--	--